



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

3090

ԹԵՐԵ

ՄԻ ՔԱՆՏԻ ԽՈՍՔ

Վահ 1574

ԽՈԼԵՐԱՅԻ ՊԱՏՃԱՌՈՒՆԵՐԻ

ԵԿ


ՆՈՐԱՆԻՑ ԶԴՈՒՇԱՆԱԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԱԾ.

յօրինելաց

ԲԺՇԿԱԳԵՏ Մ. ՇԱՀ-ՊԱՐՈՒՆԱԿ.

թիգից

1866



Արմ.

3-21870

3-21870

Ամ. 1574

ՄԻ ԳԱՆԴԻ ԻՌՈՒՔ

616.9

2-23

ԽՕԼԵՐԱՅԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ

ԵԿ

ՆՈՐԱՆԵՑ ԶԴՈՒՅԱՆԱԼՈՒ ՄԻՋՈՅՆԵՐԻ ՎԵՐԱՅ

"

2010

ՇԻՄԵԴ ԾՈԽՈՅԵՐԸ

ՅՈՐԻԱԼԵԿԱԳ

ԲԺՇԿԱԳԵՏ Մ. ՇԱՀ-ԳՈՐՈՒԵԱՆՑ.

ԽԵ-1882



ԹԻՖԼԻՅ

4866

Հ. ԷՇԻԱԶԵԱՆՅԻ ԵԽ ԸՆԿ. ՏՊԱՐԱՆՈՒՄԸ:

ԱՆ. № 22541

2002

65815

ԳՈՅԻ ԴԵՐԱԳ ԳՈ

ԳՈՅԻ ԸՆԴՀԱՐ ԳՅՈՒՅՈՒ

43

ԱՐԴ ՊՐԵՄԻՉ ԽՈՎՅԱՆԻՑ ՅԱՅՐԱԿ

6 *

ԴՕՅՈԽԵՆ ՇՅՈՒՐՈՒ

5-րդ Մարտ 1866 թ. Տիֆլիս.

45061-ՆԵ.



29528-63

11255

առ քեզուս թե և թե մենք ։ Նախար դան ծեւ
ուս արա իւս մասի մէն տակալու ցցեւթիւնի և նյու¹
յու և Նախար տակալու գաղահիս դաշնոց մի ըլլանց
և մի պատճառան ցցեւ նայ բժամքիս ցցելիկը
ցիւրցաթ պատճառ չուն ոչ մ : Անձն առըս
դանու կը անցածիու և և Նախար աճապատակ
ժայռ վեռանաշ ոչ ոչ եւ եւ կը դա դաց մաս մի յառ Անձն
մաս յամանամ ծախտու ցմայ ելափազասու և անց չի ու

Մարդուն՝ իւր թշնամու հետ յաջազակ պատեւ
բազմելու համար՝ պէտք է իմանալ նորա ոյժը , ամեն
յատկութիւնները և միջոցները , որոնցով կարող է
ազատվել նորանից : Առաւել երկիւզալի է այն թշնա-
մին , որը դաշիս է մեր վերայ անակրնկալ և բոլորովին
անձանօթ է մեզ : Մարդկային մարմինը , քանի որ
կենդանի է , միշտ և հանապազ պատերազմում է
շրջակայ բնութիւնն հետ որը թէպէտեւ մի կողմից՝
տալիս է նորան ամեն հնարներ նորա բարեկեցութեան
համար բայց միւս կողմից՝ անգարդար ջանք է անում
նորա դոյութիւնը թուլացնելու և ոչընչացնելու : Եթէ
մարդը կարողանում է իւր կինդանութիւնն մէջ յա-
ջազակ ընդդիմանալ բնութիւնն կործանիչ ներդործու-
թիւններուն գորանում նա պէտք է շնորհակալ լինի
իւր կենաց ներքին գօրութիւններուն և հանձարի
կարողութիւնը , որը Աստուած նորան շնորհել է :
Այդ անգին տուրքի շնորհիւն է , որ մարդը անչափ
և զարմանալի հնարներ է գտել իւր կեանքը քաղցրա-
ցնելու և առողջութիւնը պահպանելու համար հա-
զարաւոր մասակար առարկաներից , որոնցով շրջա-
պատօն է նա : Մեր առողջութիւնը խանդարող նիւ-
թերը կարելի է բաժանել երկու դաս , որոնցից ամենա

մեծ մասը դանվում է ամեն տեղ և մեզ առաւել ծառնօթ է, իսկ միւսերը գոյանումն միայն տեղ տեղ և ուսանցից մի քանիսը սովորաբար տեղափոխվում են այլ երկիրներ մարդկանց կամ ուրիշ առարկաների միջնորդութեամբ : Այս անկոչ հիւրերի կարգումը զլաւորապէս դասվում է և խօլերայն, որի համար կամիմ տալ մի քանի տեղեկութիւն, հաւաստի գոլով, որ ինչքան հասարակութիւնը մօտիկ ծանօթ անայ այն միջոցների հետ, որոնցով զարհութելի ժշշամին մանում է նորա մարմնոյ մէջ, այնքան վորք վնասով նա կ'աւզատվի նորանից :

Խօլերայն թէպէտ Եւրոպայումը առաջին անդամ երևեցաւ 1830 թուականին, բայց՝ նայելով հնդիկների, պարսկաց և արաբացոց հին դրու ածներին՝ շատ վաշզուց յայտնի է Հնդկաստանում, ուր նա գոյանում է ամեն տարի՝ իբրև տեղական (էնդիմիական) ցաւ, 1830 թուին խօլերայն մասաւ Ասիայից Եւրոպայ Աժատարխանով, այնտեղից՝ Առևսաստանում տարածվելուց յետոյ՝ դիմեց դէպի Սրբամտեան թագաւորութիւնները և 1833ին զնաց Ամերիկայ : Կարծ ժամանակից յետոյ ցաւը վերադարձաւ նորէն այնտեղից Եւրոպայ և սկսեց հետեւիլ համարեաւ մի և նոյն ճանապարհներին, որոնցով անցել էր Ամերիկայ զնալուց առաջ : Եօթն տարվայ մէջ միլիոնաւոր անձինք իրան զոհ բերելուց յետոյ Եւրոպայում, Ամերիկայում և Ափրիկայում խօլերայն հեռացաւ 1837 թուին, Երկրորդ անդամը եկաւ այդ արկածը Ասիայից Եւրոպայ 1847ին, Նա սկսեց իւր ճանապարհորդութիւնը ու աւերումը ինչպէտ առաջին անդամը և շրջեց մի քառնի տարի շարունակ զանազան տեղերում՝ տմառները

սաստկանալովի ձմեռները թուշանալով կամ բողոքովին
ոչընչանալով ։ այդ պատճառաւ մի քանի երկիրներ
ստիպված էին տալ հարկ անօղորմ թշնամուն մինչև
4 կամ 5 անգամ ։ Սի քանի տարի էր որ Եւրո-
պայն հանգստացել էր զարհուրելի ցաւի ձեռիցը ։
բայց դժբաղստարար երկար չը տեսեց այդ երջանիկ
ժամանակը ։ Անցեալ ամառ ինչպէս յայտնի է, նու-
րէն երեսցաւ խօլերայն Եւրոպայում և այցելեց Կով-
կասուն, որնոր առաջուց ել նրան ծանօթ էր ։

Ըստ որում ամեն գալով խօլերայն աւերել է Եւ-
րոպայն մի քանի տարի շարունակ, այժմ համարեա
բոլոր լուսաւոր կառավարութիւնները մեծ հոգսի մէջ
են, և երկիւղ կրելով, որ առաջիկայ ամառս կրկին
չը վերադառնայ ցաւը, նորա համաձայն աշխատում
են և գանացան հնարներ կամին գործ դնել, որ կա-
րողանան արգելք տալ նորա տարածմանը և թուլա-
ցնել նորա զօրութիւնը ։ Սակայն մեզ հարկաւոր չէ
ասել թէ կառավարութիւնը հոգում է մեր համար
և մենք կարող ենք հանգիստ մնալ այդ մասին ։ Ո՛չ
եթէ ամեն մինը մեզանից չը հոգայ իւր վերայ և
հասարակութեան օգտի համար չ'աշխատէ կառավա-
րութեանը ձեռնոտու լինելու այն ժամանակ վերջինիս
հօգսը կ'անցնի ի զուր և շատերը մեզանից կը դառ-
նան զոհ անխնայ թշնամուն ։ Ասենք, թէ ժամա-
նատկաւոր հիւանդանոցներ են բացանում և բժիշկներ
են տալի խօլերայի ժամանակը հիւանդներին մահից
աղատելու համար, բայց հնար կայ ամեն գիւղում
այդ կատարելու, բաւական կը լինեն երկու կամ
երեք բժիշկ այն քաղաքներում, ուր կան 5—10—15
հազար բնակիչք ։ Առաւել լաւ չէ, որ հսկենք և մօտ չը

թողնենք թշնամուն քան թէ ալստուած ողորմած է ասելրվ ինսդանք երանելի անհօգութեան մէջ Առաւ ւել լաւ չէ, որ մենք ևս ծանօթանանք նորա որպիս ուռ թիւների հետ, որ—Աստուած մի արասցէ, թէ դայ—մենք մեր կողմից նմանապէս աշխատենք թուլացնելու նորա ներդործութիւններից Ոչ թէ միայն խօլեարայի դէմ, այլ և միւս առաւել թէթե հիւնդութիւնների համար էլ անշուշտ հարկաւ որ են ամեն մարդի այդպիսի ծանօթութիւններ : Աակայն չը հեռանանք մեր նպատակից և դիմենք այն միջոցներին, որով խօլերայն սովորաբար կարողանումէ մեզ պնասելու :

Առդեօք խօլերայն ծաղկի, կարմրուկի, սկարլատիսնի (քութէշ) և այլ նման ցաւ երի պէս տարափոխիկ (դիպող) է, թէ ոչ Այդ հարցը առաջին անգամից գժուար չէ երեսում վճռերու և շատ մարդիկ ցաւի ժամանակը առաջարկում են նորան բժշկին լաւ հասկանալով նորա նշանակութիւնը իրանց առողջութեան համար : Ամեն մարդ սրնոր խօլերայ տեսած է, գիտէ որ իւր ծանօթներից շատերը նորանից մեռան, որոնք ամենենին խօլերայով հիւնդների երեսը չէին տեսած, և դիտէ նմանապէս, որ շատերը մեռցին առողջ, որոնք հիւնդներին յաճախ այցելութիւն էին ամում կամ սպահանում էին նորանց : Բայց՝ միւս կողմից նմանապէս յայտնի է, որ մի քանի տեղ այն անձինքը որոնք փախչում էին խօլերայի ժամանակը հիւնդա ներից և ցաւով ըմբռնալած տեղերից, մեծ մար առողջ էին մնում, բայց հիւնդներին այցելող և պահպանողներից շատերը դարձան զոհ (*) : Ահա

Երկու հանդամանք, որոնք միմեանց սաստիկ հա-
կառակում են, մինը բաց վկայում է, որ խօփե-
րայն տարափոխիկ ցաւ է, միւսը հակառակն է տպա-
ցուցանում։ Այդ է պատճառը, որ երկար ժամանակ
և մինչև վերջին տարիքը Եւրոպայի երկելի բժիշկ-
ները երկու մասն էին բաժանվել խօփերայի բնութեան
մասին, ոմանք համարում էին նորան տարափոխիկ ցաւ,
իսկ միւսերը ոչ։ Այդ հարցը անվճիռ մնալու պատճառ-
ուաւ շատ բան խօփերայի մասին մութն էր մնացել
մեր համար և վէճերի առիթ էր տալի, զորօրինակ,
ոմանք առում էին, թէ նո զնում է երկրից—երկիր,
քաղաքից—քաղաք քամու ուղղութեանը հետեւլով
ոմանք կարծում էին, թէ կան աւարիք, երբ օդը այն
պէտք փոփոխում է, որ այստեղ այնտեղ պատճառում
է յիշեալ ցաւը, և այն։ Այդ պատճառաւ միշտ
պէտք է մեծ շնորհակալութեամբ յիշենք գերմանաց-
ցոց բժշկապետների—Պետունկուների և Դիլըրիքի—
անունները, որոնց հետազոտութիւնները մի քանի տարի
առաջ մեծ լոյս ձգեցին խօփերայի յատկաւթիւնների և
նորա մութ կողմերի վերայ։ Այդ նշանաւոր հետազոտու-
թիւնները ցուցին, որ խօփերայն անտարակոյս տարափո-
խիկ (զիալչող) է և կպչում է միայն փախածի, ու վուրս
գնացածի (աղըի) միջոցով, երբ սոքա սկսում են եղա-
ծանվել և փտիլ։ Այնուշեան գահն, որ խօփերային
թոյնը սաստիկանում է հիւանդի թափած հիւթերի
հոտելու ժամանակը, առաւել ևս երբ դուրս են
ձգում սոցա այնպիսի տեղերում, ուր արդէն ապա-
մաս կրեց խօփերայից, բայց սարը զնացողներից ոչ մինքը
հիւանդացաւ նորանից։

կանուած գանելում են կենդանիներու առելորդ և
մնացորդը (վէինի վերայ և արտաքնոցում) : Այդ
պատճառաւ դիտերի ափերումը, առաւել ես իրք ջրեա-
րը մեծանում են, բաղմանարդ և մեծ քաղաքնե-
րում, ուզ դեախնը (մանաւանդ եթէ վիխուր և փըչ-
իշոս է) լքուած է հրածած օրգանիքական (կենդա-
նիների և բոյսերի) պրոդուքտներով — խօլերային թոյնը
առելի գորութիւն է աանումն. աւելի սաստկաբար է
տարածվում : Այդ տեղեկութիւնները յայտնի լինելուց
յետոյ, գժուար չէ հասկանալ, ինչու խօլերայն իւր
ճանապարհորդութեան ժամանակը մի և նոյն ուղղու-
թեանը չէ հետեւում, այլ դիմում է անկանոնաբար
Արեելքից գէպի Արևմուտք կամ Արևմտից գէպի
Արեելք, գնում է քամու ուղղութեանը յարմար
կամ նորա ընդդէմ : Այնուհետև հասկանալի է, ինչու
հիւանդներ այցելովներից և պահպանողներից ոմանք
հիւանդանում են, ոմանք ոչ : Հիւանդանում են
նորանք, որոնք պատահմամբ կամ սախզմամբ գնում
են այն տեղեր, ուր հիւանդի թափած հիւթերը
դուրս են ձգած և սկսել են հոտիւ բայց այն անձա-
ները, որոնք թէպէտ դիշեր ու ցորեկ հիւանդի մօտ
են, չեն տկարանում, եթէ չեն մօտանում հիւանդի
հիւթերի փտելու տեղին, ըստ որում, քանի սոքա-
նոր են և չեն հոտած, վնասակար չեն : Այժմ ան-
հասկանալի չէ, որ կարելի է խօլերային ժամանակը
ցաւ առանալ առանց հիւանդանելու, եթէ, փողո-
ցով անցնելիս կամ բարեկամիդ մօտ գնալիս՝ մանես
մի արտաքնոց (ոտաց ճանապարհ), ուր մի քանի օր
առաջ ձգել են խօլերայինների աղբը, դու կարօղ ես
հիւանդանար թէպէտե բարեկամիդ բոլոր ընտանիքը

առողջ են։ Պատահում է, որ մի վորբիկ քաղաք
քում, ուր գնացող եկողները տմենին յայտնի են և
ուր երեարար խօլերայով հիւանդ չէ մտած, ցաւը
յանկարծ երևում է։ Այդպիսի պատահմունքը շա-
տերին սխալմանց մէջ է ձգել խօլերայի տարափոխիկ լի-
նելու մասին, բայց այդ ևս դժուար չէ բացատրելու։
Հասարակութեան մեծ մասը խօլերայի ժամանակը չէ
ընդունում թանչքը (որովայնի լուծելը) իբրև նորա-
նշան, այլ կարծում է, թէ սովորական բան է, որը
ամեն տարի ամառը պատահում է շատերին մրսելուց,
միրգեղենից և այն։ այդ պատճառաւ՝ առանց ուշա-
դրութեան թողնելով ցաւը՝ շարունակում է իւր պա-
րապմունքը։ Հեշտ հասկանելու համար ասենք, թէ
մի ճանապարհորդ՝ ըստ երևութին բոլորսին առողջ
ուղեւորփում է զէպի բաքու թիֆլեղեց, ուր կայ խօլե-
րայ։ Գանձակով անցնելիս նորա մօտ երեւում է թե-
թեւ թանչք և նա կարծ միջոց այնտեղ մնալուց յե-
տոյ շարունակում է իւր ճանապարհորդութիւնը։
Մի քանի օր ճանապարհորդի գնալուց յետ, այն քար-
վանսարայում, ուր նա իջած էր, երեւում է ցաւ
ոմանց մէջ և սկսում է տարածվիլ ողջ քաղա-
քումը։ Եթէ թիֆլեղեց եկող պարոնին հարցնէք, թէ
բնակել է նա այնտեղ այնպիսի տան կամ անցած է
այնպիսի կողմերով, ուր խօլերայինը են եղել նա ձեզ
կը պատասխանէ, այն վերևը ասածիցը երեւում է,
որ խօլերային ժամանակը որ և իցէ թանչքը չէ պէտք
արհամարհել, առաւել ես, որ սկզբումն անկարելի է
խօլերային թանչքը որոշել սովորականիցը։

Առ հասարակ խօլերայն սասափիկ և շուտով տա-
րածվում է շատ տեղերում այն ժամանակը, երբ

որ և իցէ պատճառաւ զանազան կողմերից մեծ բազ-
մութիւն է ժողովում մի քաղաքում և ապրում է
ընակարանների նեղութեան պատճառաւ սեղմած ա-
ռաւել ևս եթէ արհամարհում է յստակութիւն։
Անցեալ տարի Մկրքայում ցաւը երևելուց յետոյ, ուր
շատ մահմետականք գնչվեցան, հաջիբը փախան և
ցրուեցան գէպի իրանց հայրենիբը ամեն հնար դորձ
զնելով, որ ազատեն իրանց կեանքը : Այդ պատճառաւ
խօլերայն յանկարծ երևեցաւ անցեալ ամառը Ալք-
ուանդրիա, Կահիրէ, Պոլիս (մի շաբաթուայ մէջ, ամեն
օր մեռնումէին հազար հոգիից աւել) և Տաճկաստանի
միւս քաղաքներումը, այսուհետեւ գնաց Անկոնա.
Արևելիա, Տուլոն, Օլեսսա, Պոլի, Թիֆլիզ և մինչև
Ամերիկայ : Շտաերին մեր վաճառականներից յայտնի
է, որ խօլերային տարիքը Նիժնիոյ տօնավաճառի ժա-
մանակը, երբ ամեն երկիրներից մեծ քաղմութիւն է
ժողովում, ցաւիցը հիւանդացողը և մեռնողք հա-
մեմատաբար առաւել շատանում են և այսուհետեւ
ցաւը սաստկանում է նմանապէս այն քաղաքներում,
ուր մինչև վաճառականներու վերադառնալը թոյլ եր
կամ ամենեին չը կար :

Տղամարդկանց և կանանց, թլակագլուխ ամբա-
կազմների վերայ միակերպ է ներգործում խօլերայն։
Այդ պատճառաւ անհիմն է հայոց առածը, թէ «մին-
չե հաստը բարակիլը, բարակի ջանը դուս կը գայ»:
Կլիմայի մասին կարելի է ասել, որ խօլերայն չ'ունի
յարաբերութիւն նորա հետ։ Ուստաստանը, Անդլիան,
Ֆրանսիան, Իտալիան, Սպանիան և Ասիան միակերպ
զգացին նորա հարուածը խօլերային տարիքը : Սակայն
ապրուայ եղանակը և ջերմութեան աստիճանը ունի

ներկելի ներգործութիւն խօլերայի տարածման և սաստա-
կովթեան վերայ ամառը աշնան սկզբումը և տաք օ-
րերումը հիւանդացողք և մեռնողք առաւել շատ էն
ինում, քան միւս ժամանակ : Կարելի է ասել մի և
նոյնը ալք ատների և պակասութիւն կրողների մասին:
Ժողովրդի ստորին դասը որը եղանակի փոփոխու-
թեանը յարմար չէ կարօշանում հագնվել շատ ան-
դամ ատիպված է վայելել հին կամ փշացած կերա-
կուր, կամ չէ կշամանում քան նորանք, որոնք աւելի լաւ
պայմանների մէջ են ապրում խօլերային ժամանակը :
Բայց՝ միւս կողմից՝ հարկաւոր է ասել, որ պատժվում
են և նորանք, որոնք իրանց ունեցածը չափաւորապէս
չեն գործածում : Եատ մարդիկ ցաւի ժամանակը
սկսում են չափից դուրս ուտել և գինի ու արագ
գործածել, կործելով կամ իրանց հաւատացնելով: Թէ
այսպիսի կեանքը մօտ չի թողնի նրանց խօլերայն,
սակայն փորձով յայտնի է, որ անչափ ուտողներին և
արբեցողներին ցաւը շատ հեշտ է դիպչում և վատ
է ներգործում նորանց վիրայ : Չափազանց ուտելու և
արբեցողութեան նման՝ լուծիչ ու ործացուցիչ դե-
ղերու, դժուարամարս կերակուները, սառը ու թթու
խմիչքը, և խակ ու փշացած միրգեղնը՝ թուլացնելով
մարդկային մարմնոյ կենաց զօրութիւնները, որոնցով
նա պէտք է ընդդիմանար խօլերային թոյնի ներգոր-
ծութեանը, պատճառ են դառնում նորա այս վեր-
ջինից յաղթվելուն, կամ, ուրիշ կերպ ասելով, այդ-
պիսի նիւթերը կասես թէ առաջուց պատրաստում են
մարդկային մարմինը անախորժ հիւրին ընդունելու

Համար (prédisposition): Այդ հանգամանքը թող աչքի առաջը ունենան թեթևամիտ անձինք, որոնք տեսնելով, որ զգոյշ և պահեցողներից ևս հիւանդացող լինում են, կարող են ասել, թէ «պահեցաղութիւնը էլ օգուտ ա չ' բերում և այդ պատճառաւ լաւ է քեզ անենք ու դարդ չը թողնենք բարեկամների սրտումը»: Արդեօք խօլերային ժամանակը երկիւղը վասնդաւոր է, թէ ոչ; Ժողովուրդը և բժիշկներից շատերը այն կարծիքը ունին, թէ խօլերայն առաւել հեշտ է դիպչում վախիոտ մարդկանց. բայց՝ ինչպէս երկում է փորձից՝ միակերպ ներգործութիւն ունի ցաւը քաջախրա և երկչոտ անձանց վերայ: Այդ պատճառաւ իզար շատերը՝ ահ ու դողից շփոթվելով՝ հետ են մնում իրանց պարագմունքից և չ' են կարօղանում զգուշացնուցիչ միջոցները գործ դնել ինչպէս հարկն է:

Այժմ զիմելով այն միջոցներին, որոնցով պէտք է պահպանենք մեր առողջութիւնը խօլերայից, միտքերենք, որ՝ սորա պատճառների վերայ խօսելիս՝ մեծ նշանակութիւն տուինք մենք հիւանդներու փսխածին և աղբին, ըստ որում երկարար սոցա միջնորդութեամբ է տարածվում ցաւը: Այդ պատճառաւ, առաջինն՝ զլիաւոր հոգսը պէտք է լինի այնոր վերայ, որ մեր քաղաքները խօլերային թոյնը չը մտնի, երկրորդը, որ, եթէ խօլերայն երկի միաեղ, սկզբումն խկութեացնենք նորա թոյնը կամ դոնեալ արգելը տանք նորա տարածմանը :

Առաջին պայմանը կատարելու համար լուսաւոր առավարութիւնները կարգել են կարանտիններ այն

տեղերում, որոնցով կալող է ցաւը մանել նորանց ահարութեան մէջ։ Խօլերայի կամ նորա նման ցաւերի ժամանակը եկաղներին անտպում են կարանախնումը, առողջներին թօղնում են անցնելու մի քանի օրից յետ, իսկ հիւանդներին պահում են մինչև բոլորովին առողջանալը։ Ըստ որում այդպիսի ժամանակը, ինչ պէս ասացինք վերելը, որովայնի լուծելը նոյնպէս կարող է անցաւ երկիրներումը խօլերայի տարածմանը պատճառ տալու և հեշտ չ'է անտղելը, թող ամեն մարդկան իւր և հասարակութեան օգտի համար խրզձամբանոք վարուի կարանտին ընկնելիս և չ'աշխատի օրէնքին ընդդէմ գնալու, գործածելով այս կամ այն հնարը։ Շատ զովիլի կը լինէր, եթէ հասարակութիւնը իւր կողմից կամենար այստեղ ձեռնոտու լինել ահրութեանը — եթէ գումար ժողովէր ամեն տեղ և իւր ծախսով մարդիկ դնէր քաղաքի մուտքերի վերայ, որ սոքա խօլերայով հիւանդներին չը թօղնէին քաղաքը մօնելու, տանէին հիւանդանոյ և եկողներից կասկածաւոր անձանցը բժշկին անտղել տային։ Իրաւ այդպիսի հնարը շատ ծանր է ժողովրդի համար, մանաւանդ վաճառականների, և բաւականին նիւթական զոհ է պահանջում հասարակութեան կողմից։ այսու ամենայնին, մեծ օգուտ կը բերէր նորա առողջութեան համար խօլերային ժամանակը։ Այդպիսի պահաւ պահանջում հասարակութեան կողմից ժամանակը կը հսկէին և չ'էին թօղնել, որ խօլերայով վախճանվածներին մի քաղաքից միւս քաղաք տանէին, որը թէպէտե օրէնքով սաստիկ արդելված է, բայց երբեմն պատահում է և կարող է մեծ մնաս բերել ժողովրդի առողջութեանը։

Երկրորդ պայմաննին կատարումն տալու համար՝
այսինքն, խօլերային թոյնը ոչընչացնելու և նորա տա-
րածմանը արգելը տալու համար. հարկաւոր են հե-
տևեալ հնարները : Ամենայն լնտանիք պէտք է ու-
նենայ իւր առանձին արտաքնոցը, որի մէջ՝ յստակ
պահելոց ջոկ՝ հարկաւոր է բաւականին ածուիի կամ
կրի (շենայ известъ) փոշի, խլորի կամ զաղի (քե-
զնանի կупаросъ, ferrum sulphuricum) ջուր (1) ածել
ամեն անդամ գուս զնալիս. այդ նիւթերը, մանա-
ւանդ զաղի ջուրը, կարող են ոչընչացնել և արգելք
տալ խօլերային թոյնի գյանալուն, ևթէ պատահ-
մամբ գտնվելիս լինին այնաեղ հիւանդ մարդոյ հիւ-
թերը : Մի և նոյն նպատակաւ հարկաւոր է յիշեալ
նիւթերը գործածել քարվանսարաներում, ուսումնա-
րաններում և հիւրատներում, ուր մի արտաքնոց
շատելի համար է. այդ պաշտօնը կարելի է յանձնել
մի խղճմաննքաւոր մշակի, որ երկու կամ երեք ան-
դամ օրը ածի անժիի կամ կրի փոշին կամ զաղի
ջուրը ոտաց ճանապարհի մէջ: Զգուշութեան համար
լաւ է, որ մարդ հարկաւորութեան ըլ գնայ քար-
վանսարաններում և նման տեղերում, պատճառ որ չէ
կարելի իմանալ այնտեղի արտաքնոցներումը հիւանդ
մարդիկ դուս գնացած են, թէ ոչ: Հիւանդի թա-
փած հիւթերը ըլ պէտք է թողնել սենեակում, գուրս
ձգել փէինի վիրայ, հասարակոց արտաքնոցում, ջրի
ափը կամ ջրի մէջ, մանաւանդ եթէ սոքա բնակելու
տեղին մօտիկ են. այլ նորանց վիրոյ բաւականին զաղի

(1) Կէս զրվանքայ զաղը խառնել չորս զրվանքայ ջրի
հետ :

ջուր ածելուց յնտոյ իսկոյն հեռի գուրս տանել և պինդ ու
չոր գետնում թաղել : Ըստ որսում խօլերային հիւան-
դի անկողինը շատ անդամ թացանում է նորա թա-
փած հիւթերից և այդ միջոցով խօլերային թոյնը
կարող է գոյանալ սենեակի մէջ . հարկաւոր է ան-
շու շտթաց ուստ անբ(չարշաւ)ւ կողինքը փոխել և իսկոյն
մախրաջրում եփելուց յետոյ՝ սսունով լուանալ : Ա-
ռաւել լաւ կը լին' սովորական կողինքի տեղ գործ-
ածել խօլերային հիւանդների համար յարդով (соломա)
կամ շոր խոտով լիքը դոշակ : Կողինքը թաց եղած ժա-
մանակը զէտք է նորա մէջի յարդը (ծղնուտ) կամ խոտը
այրել , իսկ պարկը՝ վերել ասածին պէս լուանալուց
և չորացնելուց յետոյ՝ կրկին լրքցնել : Եթէ հիւանդ
պահողները այս կանոնները խստիւ կատարեն , կարող
են հանդիսաւ մնալ իրանց առօղջութեան մասին :

Բարեկնամ կառավարութիւնը , ինչպէս վերել
ասացինք ժամանակաւոր հիւանդանոցներ կը բանայ
խօլերայի ժամանակը , ուր ամենայն հնար գործ կը
դնեն հիւանդներին առողջացնելու համար : Այդ պատ-
ճառաւ այն անձինքը , որոնք կարողութիւն չունին
վերոյիշեալ պայմանները տանը կատարելու և բժիշկ
հրաւիրելու , խոչեմաբար կը վարլին , եթէ հիւան-
դանալուն պէս ժամանակ չը կորցնեն և մտնեն հիւ-
անդանոց . դրանով նորա՝ սեպհական օգուտից ջոկ
կ'ազատեն իրանց լնտանիքը , որոնք ագիտութէնից
կամ աղքատառութէնից կարող են նորանց միջնորդու-
թեամբ նմանագէս հիւանդանալ : Յատ յանկակի կը
լիներ , եթէ ցաւի ժամանակը իւրաքանչիւր լնտանիքի
գլուխը՝ հոյրը կամ մայրը՝ ամեն օր տեղեկանար

իւր որդոց և ծառաների տոռողջութեանը և ժամանակին օգնութիւն հասցնէր նորանց՝ հանգամանքին նայելով։ Որպիսի գովասանաց արժանի կը լինէր քառ զարբանակ և գիւղական քահանաների արարմոնքը, եթէ կամենային սոքա իրանց աշխատութիւն տալ հասարակութեան օգտի համար և անից տուն մանագալով կամ միասին ժողովիլով իրանց ժաղեւ բնակիչներուն։ Հասկացնէին որպանց, որքան վնաս ունի ան հոգութիւնը, որքան օգուտ—զգուշութիւնը խօլերայի ժամանակը, միանգամայն, ըստ կարողութեան ծանօթացնէին յօդու ածիս պարունակութեան հետ։

Բայց վերոյիշեալ անհրաժեշտ միջոցներից, որոնց վերայ մենք զիտութեամբ առանձին խօսեցինք, մեր առողջութիւնը խօլերայից պահպանելու և նորա զօրութիւնը թաւլացնելու համար հարկաւոր են հետեւեալ զգուշութիւնները։

1) Արթինոյ և մեր շրջակայ առարկաների յստակութիւնը։ Մարմինը յստակ պահելու համար խօլերային ժամանակը առաւել յարմար և յաճախ տաք վաննայ ընդունելը և բաղանիք գնալը (օգտաւէտ են ռուսաց և Թիֆլիսութաղանիքը)։ Հարկաւոր է սպիտակեղեննը յաճախ միտնել և զգիստի յստակութեանը ուշ դարձնել։ Սենեակները առելել և յատակները շուտ շուտ լուանալ։ Եթէ տան մշջ պատերը կեղտից սևացել են, քերել և նորէն զանգվ ծածկել, շայալմները, թաւիլէքը, փողոցները, մէյշ դանները, խանութները, մանաւանդ ուրտեղ միւ և ձուկնեն ծախում, պէտք է շատ մաքուր պահպան եթէ հնար կայ, ցաւի ժամանակը քաղաքից դուրս

աանել ազբը այժ տնկերից Փէխը լուսցքի ջուրը՝
սատկած կենդանիքը, թըժան ձեմը և միւս կեղառ
առթիւնները չը ձգել արխերի կամ ջրհոների մէջ.
չը պէտք է թաղնել, որ արխի կամ լճակի (դեօլ)
մէջ ջուրը համի բնակելու աներին մօտիկ, լաւ է, որ
սա անցնի և գնայ հայտթովը: Օղի մաքրութեան
համար սենեակի մէջ հարկաւոր է լուսամօւտները
բաց անել և քամի տալ օրը մի քանի անդամ: Եթէ
ծանր հոռ է կանգնած, քացախ ծխել (քացախը ա-
ծում էն կրակում տաքացրտծ ագուուի վիրայ և մա-
նածում սենեակի մէջ): Եթէ եղանակը ներում է, կա-
րելի է վառարանը (բուխարին) վառել, որով նմանա-
պէս սենեակի օդը լաւ յատակիւում է: Եթէ կարելի է,
թող չը քնին կամ չը բնակեն միւսին մի սենեակում
շատ անձինք, ըստ որում դորանից օղը ծանրանում է
և վառնում վնասակար:

2) Տաք հագնիիլ և մբակելուց պաշանալ:
Խօլերային ժամանակը առաւել յարմար է բրդէ հա-
գուստը եղանակի փոփախութէնից մարմինը պահպա-
նելու համար: Առները չը թացանելուն և չը մրսեց-
նելուն առանձին ու շք դարձնել: Լաւ է ցորեկորման-
դալ և յատակ օլ շնչել, իսկ երեկոյանները և զիշեր-
ները, եթէ խոնաւ և ամագուտ է եղանակը, տանը մնալ:

3) Չափաւորապէս ուտել և ըմպել:
Ամենայն մարդ կարող է շարունակել իւր սօվորական
կերակուրը, միայն եթէ վնասակար չ'է, և չը պէտք է
սկսի գործածել այնպիսի ուտելիք, որոնց չէ սովոր
նորա ստոմաքսը: Առաւոտները անօթի տանից դուր
գնալը վնասակար է: Եթէ եղանակը խոնաւ կամ ցուրտ

է, թէյ կամ ուե խահվան (առահց գալթնի և տերը) յարմար են վայելելու և օդաւեւտ են : Կ'րակու ըլ պէտք է լինի նոր և թեթևամարտ զորօրինակ, բռւլեսն, պրինձի, մաւկաշարի և հաճարի շորվայ, թէրախաշ ձու, եփած կաթը, կաթնէ սպաս, փլաւ և ոչ խարի միս (ոչ իւղալի), որթի և տաւարի միս հաւ, թռչնեղին, նմանապէս և կարտովիլ, եփած կանաչ լորի, կազար, ճակնդեղ (ճարխալ) և այլն : Միրզեաղէնը կարելի է վայելել, միայն շատ չտփա, որապէս և եփած, զորօրինակ, իրեւ կռմաստ խնծորից, տանձից, տամոնից, զոմշիից ևայլն: Հացը պէտք է լինի չը փըշ չացած ալիւրից, լաւ թիած և զործածիի ոչ տաք տաք: Վնասակար են ցաւի ժամանակը, բաղի, տազի և խոզի միուր, աղարած, ծուխ և արեւուած մնեաղէնը, չիխիրթման, տօլման, հում կաթը, մածունը, չորաթանը, նմանապէս և սեխը (խարբուզակ), ձմեւրուկը, վարունդը (խիար), կաղամբը (քոլտմ), սոկոն, հում միրզեղինը, մանաւանդ եթէ սոքտ խակ կամ փչացած են: Զկնեղէնը հարկաւոր է, որքան կարելի է, սակաւ վայելել և առ ժամանակ զրկիլ զօշից զուրգ գելից, թարթից ևայլն: Զուրը պէտք է զործածիլ ոչ սառը ոչ տաք, այսինքն, մի փոքր ժամանակ սենեաւ կում պահելոց յետոյ, և ոչ շատ միանդամում: օդտաւէտ է ջրի հետ մի փոքր դինի (մանաւանդ կարմիր) խառնելը: Աղբիւրի և մեծ գետի ջւրը խօլերային ժամանակը առաւելյարմար է խմելու, բան թէ փոքրիկ և կամաց հոսող ջրերը: Կանգնած և ջրհորի ջւրը, եթէ սա զտնվում է ոտաց ժամանապարհից մօտիկ և փորտծ է փուխը գետնում, վնասակար է առ հաւ

սարակ, մանաւանդ ևս ցաւի ժամանակը : Գինի, արտղ
և հին գարեջուր չափաւորապէս գործածելը սեղանի
վերայ սովորած անձանց համար լաւ է, թէյն իւր սո-
վորական ժամանակին խմելը օգտաւէտ է, միայն նը-
մանապէս չափաւոր: Սառը և թթու խմիչքները վը-
նաստկար են, զորօրինակ, թանը, կվասը, թթու շընե-
և այլն:

4) **Ճաշից յետ փոքր ինչ հանգստանալը** և ե-
րեկոյեան վաղ պառկիլը օգտաւէտ է, գիշերները ան-
քուն մնալը շատ վնասակար :

5) **Զէ հարկաւոր առանց բժշկի և առանձին**
հարկաւորութեան լճողական կամ ործական ընդու-
նիլ ըստ որում այսպիսի գեղորայքը թուլացնում են
ստոմաքսը և դրանով կարող են վնասել խօլերայի ժա-
մանակը : Կախարդներից և շարլատաններից պէտք է
զգոյշ մնալ, թէև սոքա հաւատացնում են: որ նորանց
գեղերը կարող են գդուշացնել կամ փրկել խօլերայից.
նոցա դարմանները՝ առ հասարակ մնօդուտ լինելուց
ջոկ կարող են մեծ վնաս բերել խօլերային ժամանակը:

6) **Ամեն մարդ կարող է իւր սովորական պա-
րապմունքը շարունակել, միայն չափաւորապէս, մարմ-
նոյ ու խելքի չափավանց վաստակ լինելը վնասակար է:**

7) **Եթէ կարելի է, խօլերայի ժամանակը լաւ է**
ը բնակիլ այնպիսի տան մէջ, որը գտնվում է ցած-
տեղում, փուխր գեանի վերայ և գետից կամ լճակից
մօտիկ, չը բնակիլ նմանապէս այնպիսի սենեակում,
ուր արտաքնոյի հոտը հասնում է: Բարձր և աղա-
ռած տեղերում, սարերում կենալը, ինչպէս 1847
թռեականի խօլերայն գանձակում ցուցեց, շատ օք-



տակար է : Այդ պատճառաւ խոչեմութիւնը պահանջուցում է և ես համարձակ խորհուրդ եմ տալի , որ քաղաքումը ցաւ երեւելուն պէս , ում կարողութիւնը նը ներում է , չեւանայ սարերը և բնակի յստակ գիւղում մինչեւ Խօլերայի վերջը : Հարեւանցի ասենք , որ կովկասու գիւղականների սովորութիւնը — տների առաջեւը աղբը ու փեխնը դարսել շատ մշասաւ կար է :

8) Այն տարին , երբ կասկածանք կայ Խօլերայի երեւելու մասին , լաւ կ'անեն ուխտաւորները , որոնք մտադիր են Երուսաղէմկամ Մեքքայ այցելելու , եթէ իրանց կեանքը վտանգի մէջ չը ձգեն և թողնեն իշրանց ծանապարհորդութիւնը մի այլ ապահով ժամանակի : Այն քաղաքներումը , որոնցով պէտք է անցնին մահտէսիք և հաջիք , նոյնպէս և Երուսաղէմում ու Մեքքայում , մեծ բազմութիւն ժողովելու պատճառաւ , աշագին երկիւղ կայ այդպիսի տարիքը :

Եթէ Խօլերայն քաղաքումը երեւելուց յետոյ մարդ զգայ թուլութիւն ախորժակի կորուստ , սրտի գդաւումը ծանրութիւն , փորումը զրդոց՝ լաւ կ'անէ , որ տանը նստի , տաք հազնվի և գործածի հասարակ թէյ , տիլեաի ծաղիկ (լուսութեան) , ու հան կամ անանուխ (պիտնայ) , որոնք հարկաւոր է չայի նման եփ տալ և տաք տաք խմել : Այդ կերպիւ հարկաւոր է աշխատիլ լաւ քրանիլ և մինչեւ բոլորովին լաւանալը անից չը դուս դալ : Եթէ երեխ որովայնի լուծել բացի վերոյիշեալ տաք խմելիքներից կամ ու խահվայից (կարելի է ուսմ ևս խառնել) , հարկաւոր է իսկոյն բժիշկ հրաւիրել և մինչեւ վերջինիս դալը՝ կըպահանջար է :

յնել կրբեմսարար փորի վերայ խարդալ (горчичникъ) ու ընդունել ինողեմցեվի, Հոփմաննի (1) կամայլ նման կաթիլներ: Գդուշութեան համար խոչեմօւթիւնը պահանջում է, որ ամենայն մարդ խօլերայի ժամանակը ունենայ տանը ինողեմցեվի (Иноземцевскія капли), Հոփմաննի (Гофманновскія капли) կամայլ իւր բժշկի պատուիրած կաթիլները, որը կանխաւ պէտք է վեր առնել դեղատնից (ագտեկից): Մինչև թանչքը բոլորովին անցնելը պէտք է հիւանդը չոր և պինդ կերակուրից (մանաւանդ վեասակարից) զգուշանայ և բաւականանայ թեթև բուլիօնով կամ պրինձի շորվայով: Եթէ հիւանադի անդամները սկսում են սառիլ հարկաւոր է ոտերի և ձեռների վերայ ևս կպցնել խարդալ, յաշակալս փոխել սորանց տեղը, պահելով 10 կամ 15 րոպէ մարմնոյ վերայ: Հիւանդին տաքացնելու համար՝ օգտակար է նմանապէս բրթէ շորով ոտերը և ձեռները սպիրտ կամ տաք արտղ քսելը, որոնց մէջ կարելի է դնել կարմիր տաքեղեղ (ծիծակ) կամ քափուր: Մի և նոյն նպատակաւ կարելի է գործածել տաք ջրով լցած բութիլներ, հողի ամաններ, տաք թեփով, կորկով, մոխրով կամ աւազով լցած տոպարկներ, որոնցով պէտք է հիւանդին պատել ամեն կողմից և լաւ ծածկել ջուրը, թեփը, կորեկը և այլն, սառչելուն պէս, հարկաւոր է փոխել: Ծարաւը

(1) Ինողեմցեվի և Հոփմաննի կաթիլները կարելի է տալ չափահաս անձանց օրը և կամ 5 անգամ քսան քսան կաթիլ մի փոքր ջրի մէջ, իսկ մանկահասակներին—ութ ութ, տասը տասը կամ տասներկու տասներկու կաթիլ օրը և կամ 5 անգամ:

Հանդարտեցնելու համար կարելի է հիւանդին փռը
տռ փոքր տալ գթալով սառցի ջուր կամ սառ-
ցի մանր կտորտանք , բերանումը պահելու . միանդա-
մում շատ սառը ջուր խմելը մնասակար է : Կրկնում
եմ , որ այս հնարները հարկաւոր է դործ դնել մինա-
չև բժշկի գալը իսկ այնուհետեւ պէտք է նորա պատ-
ուիրանացը հետեւիլ : Կրկնում եմ նմանապէս , որ
հիւանդ պահողները անեթիւղ իրանց պարտաւորու-
թիւնը կարող են կատարել , միայն պէտք է զգոյշ-
լինեն և չը թողին հիւանդի թափած հիւթերը սկ-
նեակում :

Դ վախճան՝ յօդուածոյս անօգուտ չ'եմ համա-
րում յիշել այսուղ հետևեալ երկու հանդամտները :
Նախ խօլերայն ունի մի առանձին յատկութիւն , որը
չ'ենք տեսնում միւս տարափոխիկ հիւանդութիւն-
ներու մէջ , այն է , որ շատ հեշտ է նորան կտրել
կամ կանդնացնել սկզբումն , եթէ հիւանդը անյապաղ
և ժամանակին ուշ գարճնի իւր տկարութեանը :
Խուսաւոր հասարակութիւնների մէջ , արդարեւ , հազա-
րաւոր մարդիկ աղասում են իրանց կեանքը խօլե-
րայից՝ վերոյիշեալ մի ջոցները գործածելով իւր ժա-
մանակին , երբ այլ տեղերում անշատի շատերը զոհ-
վում են , որոնք տգիտութեամբ կամ արհա-
մարհանօք սկզբումը անուշադիր են լինում ցաւի
թեթե երեսոյթներուն (որովայնի լուծելուն) : Երկրորդ՝
Եւրոպայում վերջիս տարիքը խօլերայն չը տուաւ-
այնպէս մեծ վնասներ , ինչպէս առաջին անգամները :
և այդոր պատճառը այն է , որ լուսաւոր ազգերը
փորձով հասկացան խօլերային վերաբերեալ օդտակար

և վսասակար միջոցները և սկսեցին զգուշացուցիչ
Հնարները յաջողակ գործ դնել վերջին ժամանակնեւ
բումը : Եթէ այդ երկու հանդամանքը կարու են լիւ
նել բաւական ապացոյց , որ խօլերայն երկիւ դալի է
միայն անհոգների և նորա հետ անձանօթների համար ,
իսկ նորան ճանաչող և զգոյշ անձանց համար բռլորու
վին անվտանգ՝ այն ժամանակը ես կարող եմ յուշ
սալ . որ իմ մի քանի խօսքը խօլերայի վերայ չեն նմառ
նիլ ձայնի բարբառոյ յանապատի :



— 15 —

ով առջև առք պատճեն և պահանջման գաղտնաբառ և
ամսաթանգար ովհեմ յանց ծզօք խորհան զշմիան
շի մե բայաբ զշմիաբանշ ամդի քառ միջ ։ զնաց
և կար ովհեմ զշմիայի դա ։ ըլորտան մարտառ յանց
առանք իշմեն օնճամ ամէ այս և զդժերան զշմի
ապաց զանաբ բանենա ընթար և բանան մայս ինչ
ու նու նու բայաբ և զտանեան մա— զտանիւն միջ
ամէ ամէ բայդի զշմիայի զդոս վիճ մի նի դու զան
։ իտարանայ ։ բանացան վիճու վիճ



3090

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0074049

3-2187_a